

4.3. Զբոսաշրջություն

4.3.1. Միջազգային զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների և հետազոտությունների արդյունքում ձևավորված փորձագիտական գնահատումների, 2012թ. հունվար-մարտին հանրապետություն են ժամանել 104374 զբոսաշրջիկներ¹ կամ 2011թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը նվազել է 9.0%: Նույն ժամանակաշրջանում զբոսաշրջության նպատակով հանրապետությունից մեկնել է 120050 մարդ կամ 2011թ հունվար-մարտի նկատմամբ ցուցանիշը աճել է 1.9%-ով:

Միջազգային զբոսաշրջության որոշ ցուցանիշներ 2011-2012թթ. հունվար-մարտին

մարդ

	2011թ. հունվար- մարտ [◇]	2012թ. հունվար- մարտ	2012թ. հունվար-մարտը 2011թ. հունվար-մարտի նկատմամբ
Հյուրանոցների քանակը , որոնք ընդունել են միջազգային զբոսաշրջիկների	43	37	86.0
Ժամանողներ			
Ժամանել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	114711	104374	91.0
որոնցից տեղավորվել են՝			
հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում	17446	19116	109.6
բարեկամի կամ հարազատի տանը, վարձով տրվող բնակարաններում և այլն	97265	85258	87.7
Մեկնողներ			
Մեկնել են ուղևորներ, որոնք ըստ ՉՀԿ մեթոդաբանության համարվում են զբոսաշրջիկ ²	117822	120050	101.9
որոնցից ուղևորությունը կազմակերպվել է			
զբոսաշրջային գործակալությունների կողմից	1551	2251	145.1
ինքնուրույն	116271	117799	101.3

¹Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **միջազգային զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը հանգստանալու, բուժվելու, հարազատներին այցելելու, գործնական, կրոնական կամ այլ նպատակներով ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրից մեկ այլ վայր ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով: Այսինքն՝ նրա հիմնական նպատակը ճանապարհորդելն է, այլ ոչ թե աշխատանքային գործունեությամբ զբաղվելը, որի դեպքում ուղևորության համար վճարումները կկատարվեին ժամանած վայրում աշխատանքային գործունեությունից ստացված ֆինանսական միջոցների հաշվին:

²Ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք են հանդիսացել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված՝ ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնածների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ստացված ՀՀ տարածքային կառավարման նախարարության Միգրացիոն գործակալությունից, իսկ 2011թ-ից՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով, ինչպես նաև 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. օգոստոսը ՀՀ ԱՎԾ, Զբոսաշրջության զարգացման հայկական գործակալության (ԶԶՀ) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (ՄՄՀՀ) ծրագրի համագործակցությամբ իրականացված «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտության» արդյունքները:

Ըստ հյուրանոցային տնտեսություններից ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2012թ. հունվար-մարտին ՀՀ այցելած զբոսաշրջիկների 20.0%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին, 30.5%-ը՝ ԵՄ երկրներին և 49.5%՝ այլ երկրներին:

ՀՀ այցելած զբոսաշրջիկների աշխարհագրական բաշխվածության կառուցվածքն ու աճի տեմպը 2010-2011թթ. հունվար-մարտին¹

	Տեսակարար կշիռը,%		Զբոսաշրջիկների բացարձակ թվաքանակի աճի տեմպը, %
	2011թ. հունվար-մարտ [◇]	2012թ. հունվար-մարտ	
Ընդամենը	100.0	100.0	109.6
այդ թվում՝			
ԱՊՀ երկրներ	24.8	20.0	88.5
որից՝			
Ուկրաինա	2.5	2.0	88.3
Ռուսաստանի Դաշնություն	21.2	16.7	86.3
ԱՊՀ այլ երկրներ	1.1	1.3	133.0
ԵՄ երկրներ	28.8	30.5	116.0
որից՝			
Նիդերլանդներ	0.9	0.8	102.6
Իտալիա	1.7	2.0	129.8
Ֆրանսիա	7.0	6.4	100.6
Գերմանիա	3.8	3.3	95.4
Միացյալ Թագավորություն	7.5	13.0	189.8
ԵՄ այլ երկրներ	8.0	4.9	68.0
Այլ երկրներ	46.5	49.5	116.9
ԱՄՆ	15.3	14.9	106.4
Իրանի Իսլամական Հանրապետություն	17.2	14.8	94.1
Վրաստան	3.7	4.3	128.1
Թուրքիա	1.3	0.9	79.3
Կանադա	1.4	1.5	111.6
այլ երկրներ	7.6	13.2	191.4

¹ Բերված տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում և հյուրանոցային հանգրվաններում հաշվառված զբոսաշրջիկներին:

Զբոսաշրջության ցուցանիշներն ըստ նպատակի

մարդ

	2011 թ. հունվար- մարտ [◇]	Տեսակարար կշիռը (2011թ. հունվար- մարտ,%)	2012 թ. հունվար-մարտ	Տեսակարար կշիռը (2012թ. հունվար- մարտ,%)
Ժամանողներ¹				
Շնչամաներ զբոսաշրջիկներ	17446	100.0	19116	100.0
որոնցից ըստ նպատակի				
գործնական	4665	26.7	4768	24.9
հանգստի և ժամանցի	2621	15.0	2925	15.3
կրթության	2	0.0	17	0.1
բուժման	133	0.8	127	0.7
այլ	10025	57.5	11279	59.0
Մեկնողներ¹				
Շնչամաներ զբոսաշրջիկներ	1551	100.0	2251	100.0
որոնցից ըստ նպատակի				
գործնական	177	11.4	385	17.1
հանգստի և ժամանցի	409	26.4	893	39.7
կրթության	4	0.3	0	0.0
բուժման	0	0.0	0	0.0
այլ	961	62.0	973	43.2

¹ Տվյալներն արտացոլում են միայն զբոսաշրջային գործակալությունների կողմից կազմակերպված զբոսաշրջիկների թվաքանակը: